**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն**

**Ա Զ Գ Ա Յ Ի Ն   Ժ Ո Ղ Ո Վ**

**Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր**

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊԱՐՈՆ Ա.ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիմոնյան

Ղեկավարվելով Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասով և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասով՝ Ազգային ժողովի քննարկմանն ենք ներկայացնում «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որի հիմնական զեկուցողը պատգամավոր Վլադիմիր Վարդանյանն է:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ կից ներկայացնում ենք առաջադրվող նախագիծը և դրա ընդունման հիմնավորումը, ինչպես նաև օրենքում առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը:

Խնդրում ենք ներկայացված նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ՝

[illegible] (024)

[illegible] (022)

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՕՐԵՆՔԸ

## «ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Դիվանագիտական ծառայության մասին» 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-249 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի կազմակերպման և գործունեության առանձնահատկությունները, այդ թվում՝ ծառայության անցնելու և ծառայությունը դադարեցնելու, ծառայողական առաջխաղացման, դիվանագիտական աստիճաններ շնորհելու կարգերը, դիվանագիտական ծառայություն իրականացնող անձանց կարգավիճակը, ծառայության ընթացքում ու դրանից հետո այդ անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական երաշխիքները, դիվանագիտական ծառայության մարմինների ֆինանսավորման սկզբունքները, ինչպես նաև կարգավորվում են դիվանագիտական ծառայության հետ կապված այլ հարաբերություններ:

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում քաղաքացիական ծառայության կազմակերպման, պաշտոնների դասակարգման և համալրման, քաղաքացիական ծառայողների կատարողականի գնահատման, վերապատրաստման, իրավական վիճակի, պաշտոնից ազատման և ծառայության դադարեցման, ինչպես նաև քաղաքացիական ծառայության հետ կապված այլ

հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

3. Դիվանագիտական ծառայության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում քաղաքացիական ծառայության հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, եթե սույն օրենքով առանձնահատկություններ սահմանված չեն:»:

**Հոդված 2.** Օրենքի 3-րդ հոդվածում.

1) 1-ին մասը «իրականացնում են» բառերից հետո լրացնել «միայն» բառով.

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 3.** Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 4.** Օրենքի 9-րդ հոդվածում.

1) վերնագիրը «քարտուղարը» բառից հետո լրացնել «և նրա տեղակալը» բառերով.

2) 1-ին մասում «քարտուղարը դիվանագիտական ծառայող է, որն» բառերը փոխարինել «քարտուղարի պաշտոնը դիվանագիտական ծառայության պաշտոն է: Գլխավոր քարտուղարն» բառերով, իսկ «ներկայացուցչությունների» բառը՝ «ծառայության մարմինների» բառերով.

3) 2-րդ մասում «օտարերկրյա պետություններում դիվանագիտական ծառայության մարմիններում և արտաքին գործերի նախարարությունում» բառերը փոխարինել «արտաքին գործերի նախարարության համակարգում» բառերով.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 4-րդ մասով.

«4. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը ունի տեղակալ, որը քաղաքացիական ծառայող է և ի

պաշտոնե համակարգում է նախարարության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը:»:

**Հոդված 5.** Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում «կրկնօրինակը» բառը փոխարինել «պատճենը» բառով:

**Հոդված 6.** Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) 6-րդ մասի 2-5-րդ կետերը «նախարարության» բառից հետո լրացնել «հիմնական» բառով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 8-րդ մասով.

«8.Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում մասնագիտական գործունեությունը, բացառությամբ տեխնիկական սպասարկման գործառույթների հետ կապված աշխատանքային գործունեության, քաղաքացիական ծառայություն է, իսկ այդ կառուցվածքային ստորաբաժանումներում համապատասխան պաշտոններ զբաղեցնող անձինք՝ քաղաքացիական ծառայողներ են:»:

**Հոդված 7.** Օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասում 3-րդ և 4-րդ կետերից «դասի առաջին» բառերը հանել, իսկ 5-րդ և 6-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 8.** Օրենքի 22-րդ հոդվածում.

1) 1-ին մասը «հիման վրա» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված կարգով» բառերով.

2) 2-րդ մասի 1-3-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) երկրորդ դասի խորհրդական՝ առնվազն չորս տարի.

2) առաջին, երկրորդ և երրորդ քարտուղարներ՝ առնվազն երեք տարի.

3) կցորդ՝ առնվազն երկու տարի:»:

3) 5-րդ մասում «երկու» բառը փոխարինել «մեկ» բառով:

**Հոդված 9.** Օրենքի 48-րդ հոդվածը «անձնագիրը» բառից հետո լրացնել «(այսուհետ՝ դիվանագիտական անձնագիր)» բառերով, ինչպես նաև լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր նախադասությամբ. «Դիվանագիտական անձնագիրը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է:»:

**Հոդված 10.** Օրենքի 50-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 50. Դիվանագիտական անձնագրի տրամադրման կարգը**

1. Դիվանագիտական անձնագիրը տրամադրում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը՝ համաքաղաքացիական անձնագրի հիման վրա առավելագույնը հինգ տարի վավերականության ժամկետով:

2. Մինչև 16 տարեկան, ինչպես նաև 16 տարին լրացած նախազորակոչային տարիքի արական սեռի Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին դիվանագիտական անձնագիրը տրամադրվում է մինչև նրանց 19 տարին լրանալը, իսկ 19 տարին լրացած լինելու դեպքում՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանված կարգով տրված պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման կամ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կամ 8-րդ մասով կամ 29-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված բժշկական վերափորձաքննության ժամկետով:

3. Դիվանագիտական անձնագրի տրամադրումը մերժվում է, եթե.

1) դիմումատուն ներկայացրել է ակնհայտ կեղծ փաստաթղթեր.

2) դիմումատուն չի ներկայացվել օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխան կազմված փաստաթղթեր.

3) դիմումատուի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում կամ անձը հետախուզվում է քրեորեն պատժելի արարք կատարելու համար, բացառությամբ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի համաձայնությամբ անձին դիվանագիտական անձնագրի տրամադրման դեպքի:

4. Պաշտոնավարության ավարտից հետո համապատասխան պաշտոնատար անձինք, ինչպես նաև սույն օրենքի իմաստով ընտանիքի անդամ համարվողներն իրենց դիվանագիտական անձնագրերը հանձնում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հյուպատոսական կառուցվածքային ստորաբաժանում:

5. Սույն օրենքի 4-րդ մասով սահմանված կարգով չհանձնված, ինչպես նաև կորած, կեղծված, օրենքի պահանջների խախտմամբ ձեռք բերված դիվանագիտական անձնագրերը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը ճանաչում է անվավեր:

6. Դիվանագիտական անձնագիր տրամադրելու, հաշվառելու, հետ վերցնելու և անվավեր ճանաչելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը:»:

**Հոդված 11.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ստացված դիվանագիտական աստիճանները պահպանվում են:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) առաջին և երկրորդ դասերի երկրորդ քարտուղարի դասային աստիճան ունեցողներին շնորհվում է երկրորդ քարտուղարի դասային աստիճան՝ համապատասխան դասային աստիճան ունենալու ամբողջ ժամկետի պահպանմամբ.

2) առաջին և երկրորդ դասերի առաջին քարտուղարի դասային աստիճան ունեցողներին շնորհվում է առաջին քարտուղարի դասային աստիճան՝ համապատասխան դասային աստիճան ունենալու ամբողջ ժամկետի պահպանմամբ.

3) արտահերթ դիվանագիտական աստիճանի կամ սահմանված ժամկետից շուտ հերթական դիվանագիտական աստիճանի շնորհման համար կարող են դիմել միայն այն դիվանագետները, որոնց դեպքում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դա չի իրականացվել:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

### 1. Ընթացիկ իրավիճակը և ընդունման անհրաժեշտությունը

Օրենքի նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով գործնականում առաջացած այնպիսի խնդիրների լուծման անհրաժեշտությունը, որոնք կապված են արտաքին գործերի նախարարությունում քաղաքացիական ծառայության համակարգի ներդրման, օրենքի կարգավորման առարկայի հստակեցման, գործող օրենսդրական նորմերի հստակության ապահովման, դիվանագիտական աստիճանների փոփոխության, միևնույն սուբյեկտի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացու և դիվանագիտական անձնագրեր կրելու փաստով վերջինիս ազատ տեղաշարժման իրավունքի իրականացման համաչափության, իրավաչափության և դիվանագիտական անձնագրի տրամադրման, մերժման հետ կապված հարաբերությունների հստակեցման հետ՝ հիմք ընդունելով ներպետական և միջազգային օրենսդրության նորմերը:

### 2. Առաջարկվող կարգավորումների բնույթը և ակնկալվող արդյունքը

Օրենքի նախագծի ընդունմամբ արտաքին գործերի նախարարությունում «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի համաձայն նախարարության աջակցող կառուցվածքային ստորաբաժանումներում կներդրվի քաղաքացիական ծառայության համակարգը: Գլխավոր քարտուղարը (որը դիվանագիտական պաշտոն է) կունենա տեղակալ, որը կհամարվի քաղաքացիական ծառայող և կհամակարգի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը, ինչն էական նշանակություն կունենա նախարարության բնականոն գործունեության ապահովման համար:

Դիվանագիտական աստիճանների սանդղակում կիրականացվի փոփոխություն, ըստ որի՝ կփոփոխվեն երկրորդ և առաջին քարտուղարների դասային աստիճանները: Այս փոփոխությունը հիմնվում է նաև միջազգային փորձի ուսումնասիրության վրա: Գործող

դիվանագիտական դասային աստիճաններն առավել շատ ներքին օգտագործման համար են և կիրառելի չեն արտաքին հարաբերություններում:

Հերթական դիվանագիտական աստիճանի շնորհման ժամկետների փոփոխության առումով հաշվի է առնվում այն հանգամանքը, որ ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմում կամ առանձնացված ստորաբաժանումներում ծառայության ժամկետն առնվազն երկու տարի է, իսկ դրանից հետո օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություն կցորդի աստիճանով գործուղվող դիվանագետների համար խնդիրներ են առաջանում համապատասխան մարմինների հետ շփումներում՝ ելնելով այն հանգամանքից, որ բազմաթիվ երկրներում կցորդները համարվում են տեխնիկական աշխատակիցներ: Տվյալ փոփոխությունը հնարավորություն կտա օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում ՀՀ դիվանագետներին գործուղել առնվազն երրորդ քարտուղարի դիվանագիտական աստիճանով՝ ավելացնելով աշխատանքի արդյունավետությունը:

Ակնկալվող փոփոխությունների արդյունքում հնարավոր կլինի ՀՀ ԱԳՆ-ում ձևավորել միջին դասի դիվանագետների խումբ, որը ժամանակի ընթացքում կպահպանվի և կավելանա՝ հնարավորություն տալով ՀՀ ԱԳՆ-ին առավել լայն ընտրություն ունենալ տարբեր պաշտոնների նշանակման ժամանակ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին դիվանագիտական անձնագրերի տրամադրումը կիրականացվի Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի հիման վրա, ինչը կբացառի հետագայում հատկապես զինապարտ ՀՀ քաղաքացիների զինհաշվառման հետ կապված խնդիրների առաջացումը, կապահովի շահագրգիռ գերատեսչությունների միասնական տեղեկատվական բազայի ձևավորումը և զինապարտ ՀՀ քաղաքացիներին վավեր ճամփորդական փաստաթղթի տրամադրումը կիրագործվի օրենսդրության պահանջների խստագույնս պահպանմամբ և կիստակեցվի դիվանագիտական անձնագրերի տրամադրման և մերժման հետ կապված հարաբերությունների կարգավորումը:

## ՏԵՂԱԿԱՆՔ

## «ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

~~**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**~~

~~1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության կազմակերպման կարգը, ծառայության անցնելու և ծառայությունը դադարեցնելու, ծառայողական առաջխաղացման, դիվանագիտական աստիճաններ շնորհելու, դիվանագիտական ծառայություն իրականացնող անձանց կարգավիճակի, ծառայության ընթացքում ու դրանից հետո այդ անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական երաշխիքների, դիվանագիտական ծառայության մարմինների ֆինանսավորման սկզբունքների, ինչպես նաև դիվանագիտական ծառայության հետ կապված այլ հարաբերություններ:~~

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի կազմակերպման և գործունեության առանձնահատկությունները, այդ թվում՝ ծառայության անցնելու և ծառայությունը դադարեցնելու, ծառայողական առաջխաղացման, դիվանագիտական աստիճաններ շնորհելու կարգերը, դիվանագիտական ծառայություն իրականացնող անձանց կարգավիճակը, ծառայության ընթացքում ու դրանից հետո այդ անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական երաշխիքները, դիվանագիտական ծառայության մարմինների ֆինանսավորման սկզբունքները, ինչպես նաև կարգավորվում են դիվանագիտական ծառայության հետ կապված այլ հարաբերություններ:

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում քաղաքացիական ծառայության կազմակերպման, պաշտոնների դասակարգման և համալրման, քաղաքացիական ծառայողների կատարողականի գնահատման, վերապատրաստման, իրավական վիճակի, պաշտոնից ազատման և ծառայության դադարեցման, ինչպես նաև քաղաքացիական ծառայության հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

3. Դիվանագիտական ծառայության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում քաղաքացիական ծառայության հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, եթե սույն օրենքով առանձնահատկություններ սահմանված չեն:

**Հոդված 3. Դիվանագիտական ծառայությունը**

1. Դիվանագիտական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որը դիվանագիտական ծառայության մարմիններում իրականացնում են միայն դիվանագետները սույն օրենքով և այլ իրավական ակտերով այդ մարմիններին վերապահված խնդիրների լուծման ու գործառույթների իրականացման նպատակով:

~~2. Դիվանագիտական ծառայությունը պետական ծառայության բաղկացուցիչ մասն է:~~

**Հոդված 6. Դիվանագիտական ծառայության մասին օրենսդրությունը**

1. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով:

~~2. Դիվանագետների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, եթե դիվանագիտական ծառայության մասին օրենսդրությամբ այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ սահմանված չեն:~~

3. Եթե Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված է սույն օրենքով, ապա կիրառվում են այդ պայմանագրերի նորմերը:

**Հոդված 9. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը և նրա տեղակալը**

1. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության գլխավոր ~~քարտուղարը դիվանագիտական ծառայող է, որն~~ քարտուղարի պաշտոնը դիվանագիտական ծառայության պաշտոն է: Գլխավոր քարտուղարն ի պաշտոնե ապահովում է դիվանագիտական ծառայության շարունակականությունը, համակարգում է արտաքին գործերի նախարարության ենթակա մարմինների, օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ~~ներկայացուցչությունների~~ ծառայության մարմինների և արտաքին գործերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների միջև փոխգործակցությունը, ինչպես նաև իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված՝ պետական մարմնի գլխավոր քարտուղարին վերապահված լիազորությունները:

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը նշանակվում է վարչապետի կողմից՝ արտաքին գործերի նախարարի առաջարկությամբ՝ ~~օտարերկրյա պետություններում դիվանագիտական ծառայության մարմիններում և արտաքին գործերի նախարարությունում~~ արտաքին գործերի նախարարության համակարգում առնվազն 10 տարվա դիվանագիտական ծառայության ստաժ և բարձրագույն դիվանագիտական աստիճան ունեցող անձանց թվից:

3. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի՝ սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված լիազորությունների իրականացման հետ առնչվող հարցերը սահմանվում են արտաքին գործերի նախարարության կանոնադրությամբ:

4. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը ունի տեղակալ, որը քաղաքացիական ծառայող է և ի պաշտոնե համակարգում է նախարարության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը:

**Հոդված 15. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի՝ իր պարտականությունների կատարմանն անցնելու սկիզբը և ավարտը**

1. Դեսպանն իր պարտականությունների կատարմանն է անցնում դեսպանընկալ պետության ղեկավարին այդ պաշտոնում իր նշանակվելու մասին հավատարմագիրը հանձնելուց կամ այդ պետության արտաքին գործերի գերատեսչության ղեկավարին իր նշանակվելու մասին հավատարմագրի ~~կրկնօրինակը~~ պատճենը հանձնելուց հետո՝ դեսպանընկալ պետությունում ընդունված կարգի համաձայն:

2. Հայաստանի Հանրապետության գործերի հավատարմատարն իր պարտականությունների կատարմանն է անցնում այդ պաշտոնում իր նշանակվելու մասին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի նամակը դեսպանընկալ պետության արտաքին գործերի գերատեսչության ղեկավարին հանձնելուց անմիջապես հետո կամ այդ պետությունում ընդունված կարգի համաձայն:

3. Մշտական ներկայացուցիչն իր պարտականությունների կատարմանն է անցնում միջազգային կազմակերպության ղեկավարին (գլխավոր քարտուղարին) իր նշանակման մասին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի նամակը հանձնելուց հետո:

4. Դեսպանի և մշտական ներկայացուցչի լիազորությունները դադարեցվում են Հանրապետության նախագահի կողմից՝ վարչապետի առաջարկությամբ, հետևյալ դեպքերում.

1) իր գործառույթները կատարելու անհնարինության դեպքում.

2) միջազգային իրավունքով նախատեսված դեպքերում.

3) սույն օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ, 6-8-րդ, 10-14-րդ կետերում և 2-րդ մասում նշված դեպքերում:

5. Մինչև օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակվելը դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցրած անձը պաշտոնավարության ավարտից հետո թափուր պաշտոնի առկայության դեպքում արտաքին գործերի նախարարությունում նշանակվում է դիվանագիտական ծառայության պաշտոնի առանց մրցույթի:

6. Մինչև օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակվելը դիվանագիտական ծառայության պաշտոն չզբաղեցրած անձը պաշտոնավարության ավարտից հետո չի կարող նշանակվել արտաքին գործերի նախարարությունում դիվանագիտական ծառայության պաշտոնի, բացառությամբ արտաքին գործերի նախարարի համապատասխան որոշման:

**Հոդված 18. Դիվանագիտական պաշտոնները և դիվանագիտական ծառայության պաշտոնները**

1. Արտաքին գործերի նախարարության համակարգի պաշտոնները դասակարգվում են ըստ քաղաքական, վարչական, հայեցողական պաշտոնների և դիվանագիտական ծառայության պաշտոնների:

2. Քաղաքական պաշտոններն են՝

1) արտաքին գործերի նախարար.

2) արտաքին գործերի նախարարի տեղակալ:

3. Վարչական պաշտոններն են՝

1) արտակարգ և լիազոր դեսպան.

2) միջազգային կազմակերպություններում ներկայացուցիչ.

3) արտաքին գործերի նախարարության ենթակա մարմնի ղեկավար.

4) արտաքին գործերի նախարարության ենթակա մարմնի ղեկավարի տեղակալ:

4. Հայեցողական պաշտոններն են՝

1) հատուկ հանձնարարություններով դեսպան.

2) արտաքին գործերի նախարարի խորհրդական.

3) արտաքին գործերի նախարարի մամուլի քարտուղար.

4) արտաքին գործերի նախարարի օգնական:

5. Սույն հոդվածի 2-4-րդ մասերով նախատեսված պաշտոնները սույն օրենքի իմաստով համարվում են դիվանագիտական պաշտոններ, և այդ պաշտոններում նշանակված անձանց պաշտոնավարման ժամանակահատվածը հավասարեցվում է դիվանագիտական ծառայությանը, եթե այդ պաշտոններում նշանակված անձինք ունեն սույն օրենքին համապատասխան շնորհված դիվանագիտական աստիճաններ:

6. Արտաքին գործերի նախարարությունում դիվանագիտական ծառայության պաշտոններն են՝

1) արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար.

2) արտաքին գործերի նախարարության հիմնական կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար (վարչության պետ).

3) արտաքին գործերի նախարարության հիմնական կառուցվածքային ստորաբաժանման կամ ենթակա մարմնի խորհրդական.

4) արտաքին գործերի նախարարության հիմնական կառուցվածքային ստորաբաժանման կամ ենթակա մարմնի բաժնի վարիչ (պետ).

5) արտաքին գործերի նախարարության հիմնական կառուցվածքային ստորաբաժանման կամ ենթակա մարմնի բաժնի խորհրդական.

6) առաջին քարտուղար.

7) երկրորդ քարտուղար.

8) երրորդ քարտուղար.

9) կցորդ:

7. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում դիվանագիտական ծառայության պաշտոններն են՝

1) գործերի հավատարմատար

2) դեսպանորդ լիազոր նախարար.

3) գլխավոր հյուպատոս.

4) խորհրդական.

5) հյուպատոս.

6) առաջին քարտուղար.

7) փոխհյուպատոս.

8) երկրորդ քարտուղար.

9) երրորդ քարտուղար.

10) կցորդ:

8.Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում մասնագիտական գործունեությունը, բացառությամբ տեխնիկական սպասարկման գործառույթների հետ կապված աշխատանքային գործունեության, քաղաքացիական ծառայություն է, իսկ այդ կառուցվածքային ստորաբաժանումներում համապատասխան պաշտոններ զբաղեցնող անձինք՝ քաղաքացիական ծառայողներ են:

**Հոդված 19. Դիվանագիտական աստիճանները**

1. Դիվանագիտական աստիճանները հատուկ դասային աստիճաններ են, որոնք դիվանագետին շնորհվում են դիվանագիտական ծառայության անցնելիս և ծառայության ընթացքում:

2. Դիվանագիտական աստիճանները բնութագրում են մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխանող որակավորումը:

3. Դիվանագիտական աստիճանները լինում են բարձրագույն դիվանագիտական և դիվանագիտական:

4. Բարձրագույն դիվանագիտական աստիճաններն են՝

1) արտակարգ և լիազոր դեսպանի աստիճանը.

2) արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարարի աստիճանը:

5. Դիվանագիտական աստիճաններն են՝

1) առաջին դասի խորհրդականի աստիճանը.

2) երկրորդ դասի խորհրդականի աստիճանը.

3) առաջին ~~դասի առաջին~~ քարտուղարի աստիճանը.

4) երկրորդ ~~դասի առաջին~~ քարտուղարի աստիճանը.

~~5) առաջին դասի երկրորդ քարտուղարի աստիճանը.~~

~~6) երկրորդ դասի երկրորդ քարտուղարի աստիճանը.~~

7) երրորդ քարտուղարի աստիճանը.

8) կցորդի աստիճանը:

**Հոդված 22. Դիվանագիտական աստիճանի շնորհումը**

1. Սույն օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված մրցույթի հիման վրա, ինչպես նաև սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված կարգով պաշտոնի նշանակված անձին տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ նվազագույն դիվանագիտական աստիճանը շնորհվում է սույն օրենքի 29-րդ հոդվածով սահմանված փորձաշրջանն անցնելուց հետո:

2. Հերթական դիվանագիտական աստիճանը կարող է շնորհվել համապատասխանաբար ավելի ցածր դիվանագիտական աստիճանով հետևյալ ժամկետներում ծառայելու դեպքում.

~~1) կցորդ, երրորդ քարտուղար՝ առնվազն երեք տարի.~~

~~2) երկրորդ դասի երկրորդ քարտուղար, առաջին դասի երկրորդ քարտուղար, երկրորդ դասի առաջին քարտուղար, առաջին դասի առաջին քարտուղար՝ առնվազն երկու տարի.~~

~~3) երկրորդ դասի խորհրդական՝ առնվազն երեք տարի:~~

1) երկրորդ դասի խորհրդական՝ առնվազն չորս տարի.

2) առաջին, երկրորդ և երրորդ քարտուղարներ՝ առնվազն երեք տարի.

3) կցորդ ՝ առնվազն երկու տարի:

3. Հերթական դիվանագիտական աստիճանը շնորհվում է սույն օրենքի 33-րդ հոդվածով սահմանված ատեստավորման արդյունքում մրցութային-ատեստավորող հանձնաժողովի կողմից՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ներկայացված դրական եզրակացության հիման վրա:

4. Բացառիկ դեպքերում ծառայության մեջ ունեցած լուրջ հաջողությունների և անբասիր աշխատանքի համար մրցութային-ատեստավորող հանձնաժողովի եզրակացության հիման վրա դիվանագետին կարող է շնորհվել արտահերթ՝ ավելի

բարձր դիվանագիտական աստիճան կամ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետից շուտ հերթական դիվանագիտական աստիճան սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետից շուտ:

5. Արտահերթ դիվանագիտական աստիճանի կամ սահմանված ժամկետից շուտ հերթական դիվանագիտական աստիճանի շնորհումը կարող է իրականացվել ծառայության ընթացքում ոչ ավելի, քան ~~երկու~~ մեկ անգամ:

**Հոդված 48. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական անձնագիրը**

Հայաստանի Հանրապետության դիվանագիտական անձնագիրը (այսուհետ՝ դիվանագիտական անձնագիր) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրվող՝ անձը հաստատող փաստաթուղթ է, որը հաստատում է, որ դրա կրողը դիվանագետ կամ, սույն օրենքի 49-րդ հոդվածի համաձայն, այն կրելու իրավունքն ունեցող անձ է: Դիվանագիտական անձնագիրը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է:

~~**Հոդված 50. Դիվանագիտական անձնագիր տալու և հետ վերցնելու կարգը**~~

~~1. Դիվանագիտական անձնագրի վավերականության ժամկետը հինգ տարի է:~~

~~2. Պաշտոնավարության ավարտից հետո համապատասխան պաշտոնատար անձինք իրենց դիվանագիտական անձնագիրը հանձնում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:~~

~~3. Սույն օրենքի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն չհանձնված, ինչպես նաև կորած դիվանագիտական անձնագրերը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը հայտարարում է անվավեր:~~

~~4. Դիվանագիտական անձնագիր տալու, հաշվառելու, հետ վերցնելու և անվավեր հայտարարելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը:~~

**Հոդված 50. Դիվանագիտական անձնագրի տրամադրման կարգը**

1. Դիվանագիտական անձնագիրը տրամադրում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը՝ համաքաղաքացիական անձնագրի հիման վրա առավելագույնը հինգ տարի վավերականության ժամկետով:

2. Մինչև 16 տարեկան, ինչպես նաև 16 տարին լրացած նախազորակոչային տարիքի արական սեռի Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին դիվանագիտական անձնագիրը տրամադրվում է մինչև նրանց 19 տարին լրանալը, իսկ 19 տարին լրացած լինելու դեպքում՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանված կարգով տրված պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման կամ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կամ 8-րդ մասով կամ 29-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված բժշկական վերափորձաքննության ժամկետով:

3. Դիվանագիտական անձնագրի տրամադրումը մերժվում է, եթե.

1) դիմումատուն ներկայացրել է ակնհայտ կեղծ փաստաթղթեր.

2) դիմումատուն չի ներկայացրել օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխան կազմված փաստաթղթեր.

3) դիմումատուի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում կամ անձը հետախուզվում է քրեորեն պատժելի արարք կատարելու համար, բացառությամբ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի համաձայնությամբ անձին դիվանագիտական անձնագրի տրամադրման դեպքի:

4. Պաշտոնավարության ավարտից հետո համապատասխան պաշտոնատար անձինք, ինչպես նաև սույն օրենքի իմաստով ընտանիքի անդամ համարվողներն իրենց դիվանագիտական անձնագրերը հանձնում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հյուպատոսական կառուցվածքային ստորաբաժանում:

5. Սույն օրենքի 4-րդ մասով սահմանված կարգով չհանձնված, ինչպես նաև կորած, կեղծված, օրենքի պահանջների խախտմամբ ձեռք բերված դիվանագիտական անձնագրերը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը ճանաչում է անվավեր:

6. Դիվանագիտական անձնագիր տրամադրելու, հաշվառելու, հետ վերցնելու և անվավեր ճանաչելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը: